

2014թ հաստատված <<Տարվա հոբելյաններ>> շարքում ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի կատարած աշխատանքների մեջ կարևոր տեղ են զբաղեցրել տարվա հոբելյանների նշումը: /<<Համո Սահյան-100>>, <<Կոմիտաս 145>>, <<Հովհաննես Ծիրագ-100>> , <<Սևակ-90>>/: Մարզի տարբեր համայնքների մշակութասեր հասարակությանը տրամադրվել են յուրաքանչյուր մեծանուն հոբելյարի կենսագրության, գործունեության ու ստեղծագործական աշխարհը ներկայացնող մշակութային տարբեր միջոցառումներ՝ համերգային ծրագրեր, հանդիպումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ ու քննարկումներ, ասմունքի փառատոններ, երգարվեստի մրցույթներ ու ցուցահանդեսներ: 2014թ. մեծ շուքով նշվեց Կոմիտասի ծննդյան 145-ամյակը: Միաժամանակ այս տարի նշվեց նաև մեծ երգահանի անվան հետ կապված մեկ այլ կարևոր տարեդարձ՝ «Կոմիտաս» քառյակի ստեղծման 90-ամյակը: Մարզի գեղարվեստական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատություններում կազմակերպվեցին Կոմիտասյան երաժշտության լսումներ ու կատարումներ, համերգներ, երգչախմբերի ու անհատ կատարողների ելույթներ , դասական երաժշտության երեկոներ:

Դեռևս տարեսկզբից տարբեր մշակութային օջախներում սկսվել էին Սահյանական տարվան նվիրված միջոցառումներ: Իսկ հոբելյանական տարվա գլխավոր մեկնարկը տրվեց բանաստեղծի ծննդյան օրը՝ ապրիլի 14-ին Կոմիտասի անվան պանթեոնում՝ բանաստեղծի շիրմին ծաղկեդրման և հարգանքի տուրքի արարողությունով: Սահյանական տարվա ընթացքում Սյունիքի մարզի համայնքներում, գրադարաններում, մշակույթի տներում, տարբեր ուսումնական հաստատություններում տեղի ունեցան պոեզիայի երեկոներ, Սահյանական ընթերցումներ, գիտաժողովներ, թեմատիկ ցուցահանդեսներ, շարադրությունների, ասմունքի մրցույթներ և այլ միջոցառումներ: Ընթացիկ տարվա ապրիլի 13-ին Լոր գյուղում նշվել էր իր ծննդավայրի արժանի զավակի 100-ամյակը: Նշվել էր թանգարանի, գյուղի դպրոցում Համո Սահյանի անվան դասարանի բացումով, դպրոցի դահլիճում գրական-գեղարվեստական շքեղ հանդիսության կազմակերպումով ու ներկաների ականջին հնչեցնելով սահյանական մեղմ խոսքեր:

Լորում չեմ ապրում,
Ապրում եմ Լորով,
Լորը լիքն է միշտ՝
Իմ հոր ու մորով:

Մարզում և մարզից դուրս կազմակերպված Սահյանի պոեզիայի ընկալումներով շնչող միջոցառումների համար յուրահատուկ ամփոփում դարձավ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած մեծ բանաստեղծի 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն, որին ներկա է գտնվել հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը:

Հոբելյանական միջոցառումներ կազմակերպվեցին նաև Սիսիանում, որին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, բանաստեղծի հարազատներն ու նրա պոեզիայի երկրպագուներ: Սիսիանում կազմակերպված հոբելյանական միջոցառմանը մասնակցեցին նաև ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդայանը,

ՀՀ գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, երգահան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանը: Ներկաները ծաղիկներ դրեցին սիրված բանաստեղծի հուշարձանին, այնուհետև միջոցառումը շարունակվեց Սիսիանի մշակույթի կենտրոնում:

Հոբելյանական տարվա ընթացքում ավարտին հասցվեցին բանաստեղծի ծննդավայր Սյունիքի մարզի Լոր գյուղում գտնվող բանաստեղծի տան վերանորոգման աշխատանքները, որից հետո բացվեց բանաստեղծի հիշատակն ըստ արժանվույն ներկայացնող տուն- թանգարանն՝ իր մշտական ցուցադրությամբ: Ավարտի փուլում են տուն-թանգարանի բակում նախատեսված, քանդակագործ Գետիկ Բաղդասարյանի հեղինակած մեծանուն բանաստեղծի կիսանդրու տեղադրման աշխատանքները: